ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց գոհաբանական մաղթանք Հայաստանի Հանրապետության համար:

Եկեղեցականների մեծաշուք թափորով Նորին Սրբությունը Վեհարանից առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Ավագ Ս. Սեղանի առջև հոգևորականաց դասը միահամուռ աղոթք վերառաքեց առ Աստված Հայաստան աշխարհի անսասանության և խաղաղության համար: «Ամենազոր Աստված» հոգեզմայլ շարականի երգեցողությունից հետո ընթերցվեցին Ս. Գրային հատվածներ, ապա Ամենայն Հայոց Հայրապետը ծնրադիր աղոթք բարձրացրեց առ Աստված. «Գոհություն ենք հայտնում Քեզ, Տե՛ր, որ այցելեցիր հայոց ազգին, ցույց տվեցիր մեզ Քո մեծ ողորմությունը և հաստատեցիր Հայոց Հանրապետությունը Հայաստան աշխարհում: ...Արդ, մենք ամենքս խոնարհվում ենք Քո առջև, Տեր Աստված մեր, և հայցում Քո ամենառատ ողորմությունից, որպեսզի պահես ու պահպանես Հանրապետությունը Հայաստան աշխարհի խաղաղության, բարօրության և անսասանության մեջ: Օրհնի՛ր, Տե՛ր, Հայաստանի հավատարիմ ու նվիրյալ բոլոր պաշտոնյաներին... Օրհնի՛ր բոլորին, որ Հանրապետության իշխանության ներքո են՝ եկեղեցականներին ու աշխարհականներին, մեծերին և փոքրերին, տղամարդկանց ու կանանց և ողջ Քո հավատացյալ ժողովրդին՝ պահելով նրանց Քո Ս. Աջի հովանու ներքո»:

Հավարտ Հայրապետական աղոթքի կատարվեց անդաստան: Մաղթանքն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ